

**Արձանագրություն № 5 (312)**  
**ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2018 թ դեկտեմբերի 11-ի նիստի**

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:  
Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 23-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

**Օրակարգ.**

1. Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչի ընտրությունների հարցը:
2. Մագիստրոսական թեմաների հաստատում:
3. Սոցիալական արդյունքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչի ընտրությունների հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ Ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը:

Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչի պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմել է ներկայիս ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Լիլիթ Բրուտյանը:

Դեկանը ներկայացրեց մրցույթի անցկացման կարգը: Բաց քվեարկությամբ խորհուրդը հաստատեց հետևյալ կարգը:

- Մրցութային հանձնաժողովի նախագահի ելույթը,
- Ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնող՝ ներկայիս ամբիոնի վարիչ, Բ.Գ.Պ., պրոֆեսոր Լիլիթ Բրուտյանի ելույթը – 10 ր
- Հարցեր
- Ելույթներ

Մրցութային հանձնաժողովի նախագահ Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Լալայանը ներկայացրեց հանձնաժողովի եզրակացությունը, ըստ որի Լ.Գ.Բրուտյանի փաստաթղթերը համապատասխանում են անհրաժեշտ պահանջներին, և Բ.Գ.Պ., պրոֆեսոր Լ.Գ.Բրուտյանը կարող է մասնակցել ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչի պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Այնուհետև խոսքը տրվեց Լ.Բրուտյանին: Նա նշեց, որ իր պաշտոնավարման տարիներին վերանայվել են բակալավրիատում դասավանդվող առարկաների

ուսումնական ծրագրերը, մշակվել են նոր դասընթացներ և ծրագրեր մագիստրոսական ուսուցման համար: Ամբիոնում հրատարակվել է 3 մենագրություն, 5 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 3 դասագիրք, 150-ից ավել գիտական հոդված: Նշված ժամանակաշրջանում ամբիոնի 7 ասպիրանտ և հայցորդ պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները: Շարունակում է լույս տեսնել “Лингвистические исследования” պարբերական ժողովածուն: Ամբիոնում անցկացվում են գիտական սեմինարներ, որտեղ հուշագրավ գեկույցներով հանդես են գալիս ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի ճանաչված գիտնականներ:

Պրոֆեսոր Լ.Բրուսյանը չըջանցեց նաև ամբիոնի առջև առկա խնդիրները. կադրերի երիտասարդացման խնդիրը, մեր ուսանողների պահանջներին համապատասխանող դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծումը, քանի որ գոյություն ունեցող ռուսաստանյան դասագրքերը հաճախ կարիք ունեն ադապտացվելու, գիտաժողովների անցկացնելը, ինչը կապված է ֆինանսների հետ, ՀՀ այլ բուհերի հետ հարաբերությունների զարգացումը:

Ելույթ ունեցան դոցենտ Դ.Գազարովան, դոցենտ Ս.Լալայանը, դոցենտ Պ.Բալայանը, պրոֆեսոր Լ.Մաթևոսյանը: Նրանք նշեցին, որ առաջադրված թեկնածու՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Լիլիթ Գեորգիի Բրուսյանը լրջորեն զբաղվում է գիտական աշխատանքով, ունի 135 տպագիր աշխատություն, որոնց թվում՝ 13 մենագրություն: Նա մի շարք մասնագիտական խորհրդների անդամ է, “Սլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)” մասնագիտական որակավորման քննության հանձնաժողովի նախագահն է:

Ելույթներում նշվեցին առաջադրված թեկնածու՝ Լ.Բրուսյանի կազմակերպչական հատկությունները: Լ.Գ. Բրուսյանը դրսևորել է իրեն որպես հմուտ և բարեխիղճ ղեկավար: Նշվեցին նաև Լ.Գ.Բրուսյանի արհեստավարժությունը, լայն մտահորիզոնը, բարյացակամ վերաբերմունքը աշխատակիցների և ուսանողների հանդեպ, որի արդյունքում նա վայելում է անձնակազմի և ուսանողների հարգանքը:

Քվեարկության դրվեց և միաձայն որոշվեց Լ. Բրուսյանի անունը նեռարել փակ (գաղտնի) քվեարկության քվեաթերթիկում: Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. Փարամազյան Լ., Խոջոյան Յ. և Մկրտչյան Մ.: Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքում քվեարկեցին՝ կողմ՝ 23, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** 1. Լ.Գ.Բրուսյանը ընտրված է ռուսաց բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Միջնորդել ԵՊՀ-ի Գիտական Խորհրդին՝ հաստատելու Բ.Գ.Պ., պրոֆեսոր Լիլիթ Գեորգիի Բրուսյանին ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչի պաշտոնում:

## **2. ԼՍԵՑԻՆ՝ Մագիստրոսական աշխատանքների թեմաների հաստատման մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ Լ.Բրուսյանը և ռուս գրականության ամբիոնի վարիչ Լ. Հակոբյանը ներկայացրեցին մագիստրոսական աշխատանքների թեմաները: Թեմաները քննարկվեցին, թեև արդեն քննարկվել էին ամբիոններում:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել մագիստրոսական աշխատանքների հետևյալ թեմաները.  
“Ռուսաց լեզու և գրականություն” մասնագիտություն**

	<b>Ուսանող</b>	<b>Թեմա</b>	<b>Ղեկավար</b>
1.	<b>Հայրապետյան Մարիամ</b>	Концепт “зависть” в русской языковой картине мира	բ.գ.դ., պրոֆեսոր Լ.Գ.Բրուտյան
2.	<b>Պողոսյան Աղավնի</b>	Экспрессивный синтаксис в прозе И.С. Куприна (на материале романа “Колесо времени”)	բ.գ.դ., պրոֆեսոր Լ.Բ. Մաթևոսյան
3.	<b>Հովակիմյան Ամալիա</b>	Лексические средства выражения отрицательных эмоций в русском языке	բ.գ.դ., պրոֆեսոր <u>Գրձեզյան Բ.Բ.</u>
4.	<b>Պիվազյան Արուս (ՐԱԴՈ)</b>	Репрезентация концепта “небесные тела” в русских и армянских паремиях	բ.գ.թ., դոցենտ Ն.Ի.Մարտիրյան
5.	<b>Մանուկյան Սոնա</b>	Драматургия Леонида Андреева	բ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Հակոբյան
6.	<b>Հարությունյան Լուսինե</b>	Петербург в русской прозе конца XX века.	բ.գ.թ., դոցենտ Յ. Ս. Խոջոյան
7.	<b>Ավետիսյան Ալիսա</b>	Становление личности и феномен памяти в романе И.А. Бунина «Жизнь Арсеньева».	բ.գ.թ. Մ.Ա. Մկրտչյան

**3. ԼՍԵՑԻՆ՝ 2017-2018 թթ 2-րդ կիսամյակի սոցիալական արդյունքների մասին:  
ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ դեկանի տեղակալ Դ.Գազարովան:**

Քանի որ հարցումը անցկացվում է էլեկտրոնային տարբերակով, մասնակիցների քանակը հնարավոր չէ վերահսկել: Մասնակցել են ուսանողների մոտ 50 տոկոսը: Արդյունքները ուղարկվել են ամբիոններ:

Ընդհանուր առմամբ նկարագիրը դրական է, բացակայում են կաշառակերության և լրացուցիչ պարապմունքների դրդման օրինակները: Դրական պահ է ուսանողների անձնական կարծիք արտահայտելու տենդենցը:

Բողոքները վերաբերվում են ժամանակակից մեթոդների քիչ լինելուց, ցանկալի է ավելի շատ լինեն գործնական դասերը:

Դեկանատի աշխատանքի միջին գնահատականն է 4,63:

Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն – 4.66

Ռուս գրականության ամբիոն – 4.31

Ռուսաց լեզվի ամբիոնի հումանիտար ֆակ-ի – 4.78

Ռուսաց լեզվի ամբիոնի բնագիտական ֆակ-ի – 4.68

Դասախոսների գնահատականները 4-ից բարձր են:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաշվետվությունն ընդունելի գիտություն:

**4. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:**

Ֆակուլտետում սկսվում են 2019 թ. աշնանը զիտաժողով անցկացնելու աշխատանքները:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ